

Մ. ԿԱՏԿԱՆՈՎԻ, Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԵՎ «ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՊԱՐԱՏԻԶՄԻ» ՇՈՒՐԶ

Ե. Կ. ԶԻՆՆԻՔԱՐՅԱՆ

1865 թ. աշնանը ինքնակալության մոլի պաշտպան «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի խմբագիր Մ. Կատկովը հանդես եկավ մի շարք հոդվածներով¹, որոնցում «Մանուկ Հայաստան» և «Մանուկ Վրաստան» կազմակերպություններին մեղադրում էր «անջատողականության», ռուսական և լեհական ընդհատակյա խմբակների հետ կապ ունենալու, ինչպես նաև ինքնակալության դեմ կատարված այլ հանցանքների մեջ: Հանդիպելով հրապարակային ընդդիմության², Կատկովը ստիպված էր ներկայացնել կոնկրետ փաստեր «Մանուկ Հայաստանի» թեկուզ և գաղափարի գոյության մասին, որը և նա արեց՝ անդրադառնալով Ռափայել Պատկանյանի ստեղծագործությանը և առաջին անգամ ռուսական մամուլում հիշատակելով Պատկանյանի Գամառ-Քաթիպա ծածկանունը:

Կատկովին ու մեկ քան հոդվածի անանուն հեղինակը («Զակավկայեց» ծածկանունով) հարձակվեցին նաև Միքայել Նալբանդյանի վրա, նրան անվանելով «խելակորույս ու ստահակ»³: Չէր մոռացված նաև Պատկանյանի 1864 թ. լույս տեսած «Գամառ-Քաթիպայի բանաստեղծությունները» ժողովածուն, որը գրաքննական տեսանկյունից իսկապես բավական հետաքրքիր է: Հատկապես ուշագրավ է «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծությունը, որին իր հոդվածում անդրադառնում է Կատկովը: Ստեղծագործության առաջին տպագրության ժամանակ⁴ նրան կցված ծանոթագրության մեջ Պատկանյանը հավաստում է, որ հեղինակն ինքը չէ, և որ «հյուսիսային տի-րապետող ազգը» լեհերն են: «Հարգելի ազգակիցքս թող ներեն իմ փառասիրությունը, որ ես համարձակվում եմ օտարի աշխատանքը իմ անշան անունին սեպհականելու,—գրում է նա,—ես ունիմ իմ արդարությունը մարդիկ աստղերին անգամ տալիս են իրանց անունը, որ ինչպես հայտնի է, ամենեվին նոցա մատներին գործը չէ»⁵: Այս ծանոթագրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ գրաքննության համար հատուկ ստեղծված «առասպել»։ Պա հետագայում խոստովանեց հենց ինքը՝ Պատկանյանը⁶, Այս «առասպելը» 1862 թ. ընդհանուր առմամբ չօգնեց. Թիֆլիսի գրաքննիչ Ղայթմազովը բավական «աշխատել էր» ձեռագրի վրա, և բանաստեղծությունը լույս տեսավ մեծ կրճատումներով: Սակայն հետաքրքիր է մի իրողություն. նշված «առասպելը» 1864 թ. ժողովածուում բացակայում է, իսկ բանաստեղծության տեքստը տպագրված է հենց բնագրով, առանց գրաքննիչ ջնշումների: Եվ ընդհանրապես, գրքում տեղ գտած ստեղծագործություններում չի կատարվել ոչ մի կրճատում, չի հանվել ոչ մի բառ անգամ, թույլատրված է բացարձակապես ամեն ինչ, այդ թվում և «Արաքսի արտասուքի» նշանավոր տողերը «գիծ Քուռի» մասին,

¹ Московские ведомости, 1865, № 194, с. 1, № 221, с. 1, № 222, с. 1.

² Санкт-Петербургские ведомости, 1865, № 259, с. 1; Колокол, № 197. 25.V.1865, с. 1619.

³ Московские ведомости, 1865, № 222, с. 1.

⁴ Կոունկ Հայոց աշխարհին, 1852, № 6:

⁵ Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 285: Այսուհետև՝ Ռ. Պատկանյանի գործերից ու նամակներից (Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1970) մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

⁶ Արձագանք, 1892, № 30, էջ 1:

որոնք հետագայում բազմիցս արգելվել են: Կարելի է եզրակացնել, որ գրաքննիչը կամ շատ լայնախոհ է մոտեցել այս գրքին, կամ էլ թույլատրել է տպագրության՝ առանց կարդալու: Բայց, միգուցե, Պատկանյանի ժողովածուն, ինչպես նաև Ս. Շահագիրի «Անտի վիշտը», ընդհանրապես չեն ներկայացվել գրաքննության: Այս գրքերի տպագրությունը մի իսկական հանելուկ է մեզ համար: Ասենք, դա հանելուկ էր և ժամանակակիցների համար: Այս տեսակետից հետաքրքրական է լազարյան ճեմարանի հոգաբարձու Խ. լազարյանի՝ 1865 թ. հունվարի 26-ի նամակը ճեմարանի տնօրենին, որ հրապարակել է Ս. Արեշյանը: «Հայտնի չէ, թե ինչպես, որտեղից, ինչ աղբյուրներից,—գրում է լազարյանը,—Պետերբուրգում և այստեղի գրաքննական կոմիտեում թափանցել և տարածվում են լուրեր ու ասեկոսներ, որ Մոսկվայում տպվում են հայերեն լեզվով գրքեր՝ որոշ անբարենպաստ նպատակներով: Այդ թվում այժմ ի հայտ են եկել դատողություններ վերակացու Շահագիրի նոր հրատարակության վերաբերյալ՝ «Անտի վիշտը» և զանազան բանաստեղծություններ» վերնագրով: Տպագրվել է լազարյան ճեմարանի տպարանում և գրաքննության հավանությունն ստացել Մոսկվայում: Հիշատակված չէ, թե ո՞վ է գրաքննիչը: Հետաքրքիր է այդ իմանալ... Եթե գրաքննությունը թույլատրել է, ապա ճեմարանի համար պատասխանատվության հարց չկա»⁷:

Երկու գրքում էլ, ինչպես ասվեց, այդ «ներողամիտ» գրաքննիչի ազդանունը նշված չէ: Մեր կարծիքով, դրանք գրաքննություն չեն անցել: Դրա օգտին է խոսում այն փաստը, որ նույնիսկ պետերբուրգյան գրաքննական կոմիտեի պետական պաշտոնյաները հավաստի տվյալներ չունեին և ստիպված էին բավարարվել բանավոր տեղեկություններով: Հասկանալի է և լազարյանի տարակուսանքը. բանն այն է, որ Մոսկվայում լույս տեսնող հայկական բոլոր հրատարակությունները, այդ թվում և «Հյուսիսափայլը», պարտադիր գրաքննության էին ենթարկվում Պետերբուրգում, քանի որ Մոսկվայում չկար հայերեն իմացող պաշտոնական գրաքննիչ:

Եիշտ է, «Գումառ-Քաթիպայի բանաստեղծությունները» գրքում նշված է «Թուլյատրված է գրաքննության կողմից, Ս. Պետերբուրգ, 1864 թ., մարտի 31», սակայն մյուս կողմից հայտնի են նաև Պատկանյանի հետևյալ տողերը, որոնք վերաբերում են գրքի հրատարակիչ ոմն Տեր-Միքայելյանին: «Քու Տեր-Միքայելյանը մի անպիտանների անպիտան, խարդախների խարդախ և մորեխաբանդ խոյեցի դուրս եկավ,—գրում է Պատկանյանը Քանայանին,— Недаром Бог шельму метит, ինչեիցե, նա կարծում է, թե խաբելով աշխարհ կանցնվի, եթե այդպես լինի ևս, ետ գալը դժվար է» (265): Խոսքն այստեղ, հավանաբար, ֆինանսական հարցերի մասին է, բայց Տեր-Միքայելյանն անտարակույս նույն մեթոդներով կարող էր «լուծել» և այլ, այդ թվում և գրաքննական հարցեր:

«Գումառ-Քաթիպայի բանաստեղծությունները» գրքից Կտակովն ընտրել էր միայն երկու ստեղծագործություն, և այդ ընտրությունը, իհարկե, պատահական չէր: Բանն այն է, որ Կտակովը չէր ուղղում անդրկովկասյան «անջատողականության» հիման վրա միայն մեղադրել Պատկանյանին «անբարեհուսության» մեջ: Ընդհակառակն, Կտակովն ուզում էր ցույց տալ, որ հայերի մեջ կա մի մեծ քաղաքական կազմակերպություն, որը ղեկավարվում է Պետերբուրգից, ունի լուրջ մտադրություններ և փորձում է գործել: Դա է պատճառը, որ նա բավարարվեց վկայակոչելով միայն Ռ. Պատկանյանի «Գումառ-Քաթիպա» ծածկանունը, ընայած Պատկանյանը բնավ էլ չէր թաքցնում այդ ծածկանունը: Արդյոք Կտակովի համար հարմար կլինե՞ր մի քանի բանաստեղծության հիման վրա պնդել մի ամբողջ կազմակերպության գործունեության մասին: Իհարկե, ոչ: Հենց դա է պատճառը, որ, ըստ Կտակովի, այս բանաստեղծությունների հեղինակներն են «Մանուկ Հայաստանի» ինչ-որ

⁷ С. Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, с. 402.

առաքյալներ: «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծությունից նա մեջբերումներ է արել այն պատճառով, որ այստեղ և միայն այստեղ է Պատկանյանն օգտագործել «Մանուկ Հայաստան» բառերը:

Նշենք, որ 1862 թ. մայիսի սկզբին վիթխարի հրդեհներից հեղձուցիչ դարձած Պետերբուրգում տարածվեց մի թուցիկ՝ «Երիտասարդ Ռուսաստան» վերնագրով: Այն հրատարակված էր «Կենտրոնական հեղափոխական կոմիտեի» անունից և «արյունալից» ու «անողորմ» հեղափոխության, Ձմեռային պալատի վրա հարձակման կոչ էր անում: Այդ թուցիկի ներգործության ուժի մասին Գերցենը գրել է. «Երիտասարդ Ռուսաստանի» սարսափից... աճյունի պես փոշի դարձան ամեն ինչ՝ և առաջադիմության նախարարներն ու լիբերալիզմի տնօրենները, և մարդասիրական ուստիկանությունն ու ազատագրության սեղանապետները⁸: Թուցիկի տարածումը պատահամբ համընկավ պետերբուրգյան հրդեհներին և ունեցավ մի ահռելի ազդեցություն՝ կարծես, արդեն գործում էր «Երիտասարդ Ռուսաստանը»: Պատկանյանը, իհարկե, դիտեր Գարիբալդիի և «Երիտասարդ Իտալիայի» գործունեության մասին: «Երիտասարդ Ռուսաստան» թուցիկը, կարծես, վկայում էր, Ռուսաստանում սկսվում է նոր հզոր շարժում: Գուցե հենց այդ իրադարձությունների տպավորության տակ է գրված «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծությունը: Իհարկե, դա միայն մեր ենթադրությունն է, սակայն փաստ է, որ մինչև 1862 թ. մայիսը Պատկանյանի ստեղծագործություններում չկա և ոչ մի հիշատակություն «Մանուկ Հայաստանի» մասին:

Ինչ վերաբերում է «Ռուսանդին»⁹, ապա դա մի սովորական ուսանողական բանաստեղծություն է, որն առաջին անգամ տպագրվել է դեռ 1856 թ.: Կատկովն արև հիշատակել է միայն վերնագրի պատճառով: Ըստ Կատկովի, «Մանուկ Հայաստանի» առաքյալները, իհարկե, պետք է հույս դնեն ուսանողության վրա, որը միշտ բարենպաստ հող է եղել խռովություն սերմանողների համար:

Վերը նշված հանգամանքները վկայում են, որ Կատկովի՝ մեղ անհայտ լրատուն, որի մատուցած փաստերից էր օգտվել Կատկովը, բավականին քաջատեղյակ էր իրողությանը: Դա ավելի պարզ կդառնա, երբ ուշադրությամբ ընենք լեհական ապստամբության նկատմամբ հայ հասարակության մի մասի ցուցաբերած կարեկցության հարցը: Թիֆլիսի վերաբերյալ, ինչպես պնդում էր Կատկովը, մենք որևէ տվյալ չունենք, բայց պահպանվել է մի հիշատակություն Պետերբուրգում տեղի ունեցած հետևյալ դեպքի մասին: Քաղաքի հայ համայնքի ազդեցիկ անդակներից մեկը՝ Մովսես Բուդախյանը, հայկական եկեղեցում «Հյուսիս» թերթի փաստական խմբագիր Գաբրիել Պատկանյանին հրապարակայնորեն վերադարձրել էր այդ թերթի համարներից մեկը, հայտարարելով, որ «...մեր զաղափարները ի՞նչ է, դուք ի՞նչ եք գրում, հարկավոր էր այնքան գովել այն հայ զինվորներին, որ լեհաց պատերազմի մեջ վիրավորվել են...»¹⁰:

Եթե «Հյուսիսափայլի» աշխատակիցը (Մ. Բուդախյանը) լեհական ապստամբության նկատմամբ համակրանքը համարում էր անհեթեթություն (հավանաբար հետևելով Ստ. Նազարյանցի քաղաքական բարեհուսությանը), ապա «Կոլոկոլում»¹¹, ընդհակառակն, կան այսպիսի տողեր. «...ինչ վերաբերում է «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի արև հավաստիացմանը, որ լեհական ապստամբության ժամանակ հայ և վրաց երիտասարդությունը կարեկցություն էր արտահայտում լեհերի նկատմամբ, ապա այդ կարեկցությունը կարող էր լինել բացառապես արդարության զգացմունքից»¹²:

Հայկական խմբակներում անդրկովկասյան լեհերի դեկավար դերի վերաբերյալ Կատկովի պնդումը, մեր կարծիքով, քիչ է հավանական: Սակայն

⁸ А. И. Герцен, Собр. соч. в 30-ти томах. т. 18, М., 1959. с. 287.

⁹ Մ. Սադյան, Ռափայել Պատկանյան. Կյանքը և գործը, Երևան, 1930, էջ 229:

¹⁰ Колл. № 208, 15.XI. 1985, с. 1707.

այս հարցը կարելի է քննարկել մեկ այլ տեսանկյունով. իսկ ընդհանրապես կարող էր արդյոք որևէ կապ լինել Արևելյան Հայաստանի հայ առաջադեմ գործիչների և 1860-ական թվականների լեհ ազատագրական շարժման մասնակիցների միջև:

Հայտնի է, որ 1856 թ. հոկտեմբերից Պատկանյանը սկսեց հայերեն լեզվի մասնավոր դասեր տալ Պետերբուրգ եկած մի քանի հայ պատանիներին: Պատկանյանն իր նամակներում թվարկում է նրանց ազգանունները, այդ թվում հիշատակվում է և թիֆլիսաբնակ ազնվական Կարգանովի (Ղորղանյան) անունը: Պատկանյանի հետագա երեք տարվա նամակներում այս ազգանունը հիշատակված չէ: Հաջորդ հիշատակումը վերաբերում է 1859 թ. նոյեմբերին, ընդ որում, Պատկանյանի այդ նամակում կան հետաքրքիր տեղեկություններ: Պարզվում է, որ Ալեքսանդր Կարգանովը շտաբս-կապիտան է, ավարտել է Ռազմական ակադեմիան և Գլխավոր շտաբի սպա է: Պատկանյանն այսպես է բնութագրում Կարգանովին՝ «...գիտուն, բարեհոգի-ճշմարտասեր երիտասարդ է, այլև տաք ազգասեր, մարդասեր, և յուր այդ զովանի առաքինություններն արդյամբ ցույց է տալիս»: Մեկ այլ տեղում կարդում ենք՝ «Դա նոր ուղղության մարդ է, պարզ, ուղիղ հայեցվածով ներկա դարուս վրա» (224): Պարզվում է, որ Կարգանովը «պաշտում և աշակերտում է» Վիկտոր Հյուգոյին, 1848 թ. հունգարական ապստամբության ղեկավարներից մեկին՝ Լայոշ Կոշուտին և ֆրանսիական քաղաքական գործիչ Ժյուլ Սիմոնին:

Նամակից կարելի է եզրակացնել, որ Պատկանյանը Կարգանովին մանրամասնորեն պատմել է Գամառ-Քաթիպա խմբակի եղբայրական ուխտի մասին: Պատկանյանը միաժամանակ թվարկում է այդ եղբայրական միության անդամներին՝ Գ. Քանանյանին, Մ. Թիմուրյանին, Ամբարդանյանին, իրեն և Կարգանովին, որի հետ, Պատկանյանից բացի, հազիվ թե հիշյալ անդամներից որևէ մեկն այդ ժամանակ ծանոթ լիներ: Հավաստի է թվում, որ Պատկանյանը Կարգանովին առաջարկել էր դառնալ իրենց խմբակի անդամ, մի խմբակի, որն այն ժամանակ թերևս գոյություն ուներ ավելի շուտ Պատկանյանի երևակայության մեջ, քան իրականում: Ըստ պատմաբան Վ. Դյակովի տվյալների, շտաբս-կապիտան Ալեքսանդր Կարգանովը հենց այդ ժամանակ մասնակցում էր «Գլխավոր շտաբի ակադեմիայի» ունկնդիրների ռազմահեղափոխական խմբակի գործունեությանը, որը սերտորեն կապված էր Զեռնիշևսկու և Դոբրոլյուբովի հետ: Այդ խմբակը ստեղծվել էր 1857 թ. և զբաղվում էր հեղափոխական պրոպագանդով, թուրքիկներ տպելով, այդ թվում «Վելիկոռուս», «Սրիտասարդ Ռուսաստան», ինչպես և Լոնդոնի ռուսական ազատ տպարանի հրատարակությունները տարածելով:

Վ. Դյակովի աշխատության մեջ կարգում ենք՝ «Կորգանով Ալեքսանդր Ալեքսանդրովիչ, Կովկասյան սակրավոր գումարտակի պոդպորուչիկ, պատրաստվում էր Պավլովյան կորպուսում և Գլխավոր շտաբի ակադեմիայում: 1860 թ. օգոստոսին գտնվում էր Պետերբուրգում, արձակուրդի մեջ էր և կապված էր Գլխավոր շտաբականների խմբակի հնարավոր մասնակից Մեխակյանի հետ...»¹¹: Դյակովն իրավացի է: Կարգանովն իսկապես 1860 թ. արձակուրդին անց է կացրել Պետերբուրգում, ուր նա, հավանաբար, եկել է մայիսի կեսերին: Ծ. Զարենցի անվ. դրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) գրադարանում Ռ. Պատկանյանի գրքային ֆոնդում պահվում է նույն՝ 1860 թ. լույս տեսած ֆրանսերեն լեզվով մի գրքուկ, որը հայ հին և միջնադարյան դրականության հեղինակների տպագրված գրքերի կատալոգ է և պատկանում է Քերովըն Պատկանյանի գրչին: Գրքի վերնագիրն է «Catalogue de la littérature arménienne, depuis le commencement du IV siècle jusque vers le milieu du par M. Patcanian»: Գրքի տիտղոսաթերթից առաջ կա ռուսերեն երկու նշում: Նախ գրված է՝ Копие Петрович поручил мне передать

¹¹ В. А. Дьяков, Деятели русского и польского освободительного движения в царской армии 1856—1865 годов (Библиографический словарь), М., 1967, с. 76.

Вам эту книгу. А. Карганов, 22 мая», ապա Ռափայել Պատկանյանն ավելացրել է՝ «Керопе Петровичу спасибо, а г-ну Карганову — два. Р. Патканян»¹²։ Նշենք նաև, որ ԳԱԹ-ի Ռափայել Պատկանյանի ձեռագիր ֆոնդում է գտնվում Կարգանովի գրած հետևյալ բովանդակությամբ մի երկտողը՝ «Մեծարգո բարեկամ պարոն Պատկանյանց, Մեծ ուրախություն և պատիվ կը պատճառեք ինձ, եթե միջոց գտնեք այս երեկո մի քանի քաղցր ռոպի պարզեցնել ինձ իմ տանը։ Ձեր պատրաստակամ բարեկամ Ա. Ղորղանյան։ Հոկտեմբերի 10» (թվականը նշված չէ)¹³։ Սա մի լրացուցիչ վկայություն է Պատկանյանի և Կարգանովի միջև հաստատված սերտ կապի վերաբերյալ, ինչպես նաև՝ այն մասին, որ նրանք հանդիպում և զրուցում էին ոչ միայն Պատկանյանի, այլև Կարգանովի տանը։

Կարգանովը Գլխավոր շտաբի ակադեմիայում սովորել է 1856—1858 թթ.։ Նույն տարիներին այնտեղ սովորում էին Ջ. Սերակովսկին (որը 1863—1864 թթ. լեհական ապստամբության ղեկավարներից էր), շտաբ-կապիտան Ի. Մեխեդան (որը կապված էր Իվանիցկու և «Կազանսկի զագովորի» այլ ղեկավարների, ինչպես նաև «Ջեմլյա ի վոլյա» կազմակերպության պետերբուրգյան անդամների հետ)։ Խմբակի ղեկավարն էր Ջ. Սերակովսկին։ Գլխավոր շտաբականների խմբակում Կարգանովի գործունեության վերաբերյալ առաջիմ որևէ այլ տվյալ չունենք։ Պրա համար հարկավոր է առանձին ուսումնասիրություն։ Սակայն այստեղ մեզ ավելի շատ հետաքրքրում է հետևյալը. արդյո՞ք Կարգանովի հայտնվելը պատահական էր, թե՞ նա ուներ մեկ այլ մտադրություն՝ մտերմանալ Պատկանյանի հետ, նրա միջոցով ծանոթանալ հայկական ազգային խմբակների այլ անդամների հետ, հետո փորձել կապ հաստատել այդ խմբակների միջև մեկ ընդհանուր հիմքի՝ ինքնակալության դեմ պայքարի հիման վրա։ Նկատի ունենալով այս հանգամանքները՝ կարելի է այլ կերպ հասկանալ և Պատկանյանին տված Կարգանովի հետևյալ խորհուրդը՝ «Ղորղանյանը ասում է, — գրում է Պատկանյանը, — պետք չէ մեր ուխտը մտցնել ամեն ալիսոյին մարդիկ, համախոհներ պտրել պետք չէ, եթե լավ մարդիկ կան, նոքա մեզ կորոնեն։ Առհասարակ զա շատ խելոք և հեռատես երիտասարդ է, թեև տարիքով 24-ամյա է» (225)։ Խնչ է դա, սովորական զգուշություն, թե՞ մի բան, որը նման է կոնսպիրացիայի։ Այնուհետև նամակից հայտնի է դառնում, որ Կարգանովը հետաքրքրվում է Քանանյանով, Ինչո՞ւ։ Նա ուզում էր պարզապես ծանոթանալ լավ մարդու հետ (Պատկանյանի նկարագրությամբ), թե՞ նրա նպատակն էր ծանոթություն հաստատել «Գամառ-Քաթիպա» ուխտի ղեկավարի և Քանանյանի միջոցով՝ Մոսկվայում ապրող այլ հայերի հետ։ Հավանաբար, հենց դրա համար էին պատրաստվում Մոսկվա մեկնել Պատկանյանն ու Կարգանովը։ Պատկանյանի հիշյալ նամակում կարդում ենք՝ «Դու գրում ես, թե միտք ունիս շուտով գալու, ես ևս եկած շաբաթ մտադիր եմ գալու այդտեղ, ուրեմն, դու սպասե մեզ, և հետո մենք (այսինքն, ես և Ղորղանյանը) կբերենք քեզ մեր մոտ» (225)։ Նույն նամակում Պատկանյանը Քանանյանից խնդրում է 60 ռուբլի պարտք՝ ճանապարհածախսի և Մոսկվայում ապրելու համար։ Հայտնի չէ, արդյոք ուղարկվե՞լ է այդ գումարը։ Համենայն դեպս, Պատկանյանի հետագա նամակներից պարզվում է, որ նա Կարգանովին պարտք է 50 ռուբլի (235)։ Արդյոք դա չի՞ նշանակում, որ ուղևորությունը դեպի Մոսկվա իսկապես տեղի է ունեցել։

Նշենք նաև, որ Պատկանյանի միջոցով Կարգանովը հնարավորություն ուներ ծանոթանալ Մ. Բուդաղյանի, Հ. Իզմիրլյանի և պետերբուրգցի ալլ հայերի հետ։ Համոզված ենք, որ Կարգանովն անձամբ ծանոթ է եղել նաև Մ. Նալբանդյանի հետ։ Վերջինիս ծոցատետրում կա այսպիսի մի նշում, որն արված է 1861 թ. մարտի 27-ին Փարիզում՝

¹² Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ռ. Պատկանյանի ֆոնդ, դիրք 847։

¹³ Նույն տեղում։

«6 օրինակի փողը
2 օրինակ Իզմիրյանին
1 Եզյանց
1 Բուդաղյանց
1 Կարգանով
1 Շանշյանց»¹⁴։

Նալբանդյանը Փարիզում էր գտնվում 1861 թ. մարտի 13-ից մինչև ապրիլի 19-ը։ Հենց այդ ժամանակով էլ (մարտի երկրորդ կես) թվագրված է «Երկու տողի» լույս տեսնելը։ Մենք համամիտ ենք ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի այն ենթադրությանը, ըստ որի, ծոցատետրի այս հատվածը վերաբերում է «Երկու տողի» օրինակներին¹⁵։ Եթե նույնիսկ հնարավոր համարենք, որ Նալբանդյանը անձամբ ծանոթ չէր Կարգանովին (որը քիչ է հավանական), միայն «Երկու տողը» Կարգանովին ուղարկելու փաստն արդեն շատ բանի մասին է խոսում։ Ավելացնենք, որ Նալբանդյանի ծոցատետրում կա նաև Կարգանովի հասցեն¹⁶։

Հետաքրքիր է, որ Նալբանդյանի ծոցատետրի՝ վերը բերված նշման մեջ Կարգանովի ազգանունը դրված է Եզյանցի, Իզմիրյանցի և Բուդաղյանի (հավանաբար՝ Մովսես) ազգանունների կողքին։ Հիշենք նաև, որ Պատկանյանը մի շարք նամակներում Քանանյանին ողջուն է հաղորդում Կարգանովից և Իզմիրյանից (226), Կարգանովից, Շանշյանից, Բուդաղյանից (6, 240)։

Ամփոփելով վերը շարադրածը, նշենք, որ այստեղ նկատի ունենք հատկապես ոռու-լեհական «գլխավոր շտաբականների» խմբակի և առաջադեմ հայ մտավորականության մի մասի միջև կապի առկայության հնարավորությունը։ Ցավոք, առայժմ դեռ չկան այլ հավաստի փաստեր, որոնք նոր լույս կսփռեն այդ հարցի վրա։

Կատկովն իր ամբաստանություններով արտահայտում էր հայ հասարակության առաջադեմ մասի թշնամիների տրամադրությունները։ Իր հարվածները նա ուղղել է ոչ միայն Ռ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի դեմ։ Կատկովի ելույթը վերջին նախազգուշացումը եղավ 1860-ական թվականների բոլոր հայ առաջադեմ գործիչների համար։ Շուտով Ալեքսանդր II-ի դեմ Կարակոզովի անհաջող մահափորձին հետևեցին ինքնակալության բռնությունները, որոնք ուղղվում էին ինչպես ոռու, այնպես էլ հայ առաջադեմ հասարակական մտքի զարգացման դեմ։

О М. КАТКОВЕ, Р. ПАТКАНЯНЕ И «АРМЯНСКОМ СЕПАРАТИЗМЕ».

Е. К. ЧИЛИНГАРЯН

Р е з ю м е

В середине 60-х гг. XIX в. редактор «Московских ведомостей» М. Катков написал несколько статей об «армянском сепаратизме». В разгоревшейся полемике приняли участие «Колокол», «Санкт-Петербургские ведомости». Материалы полемики в ряде аспектов уже рассматривались исследователями. Однако нами найдены новые данные, в частности, связанные с Р. Патканяном, которые представляют боль-

¹⁴ Նույն տեղում, Մ. Նալբանդյանի ֆոնդ, № 14, էջ 50։

¹⁵ Մ. Նալբանդյան, Անտիպ Երկեր, Երևան-Մոսկվա, 1935, էջ 390։

¹⁶ ԳԱԲ, Մ. Նալբանդյանի ֆոնդ, № 14, էջ 50։

шой интерес и позволяют предположить о вероятности связи наиболее прогрессивной части армянского общества 60-х гг. XIX в. с крупным военно-революционным кружком Академии генерального штаба. На основе изучения писем Патканяна и других архивных материалов можно предположить, что эта связь осуществлялась через члена этого кружка штабс-капитана А. Карганова. В рамках данной работы установлен факт его близкого знакомства с Р. Патканяном, М. Налбандяном и др.

Мы также считаем возможным, что издание сборника стихотворений Р. Патканяна в 1864 г. было предпринято без цензурного разрешения.